

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ԵՐԵՎԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

11 մարտի 2020 թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Տաթևիկ Արթուր Զհանգիրյանի «Արցախի Հանրապետության Դրմբունի և Կաշենի մետաղահանքային արդյունաբերության ազդեցության գնահատումը հող-ջուր-բույս համակարգում» թեմայով 2.01.01-«Ընդհանուր երկրագործություն, հողագիտություն, հիդրոմելիորացիա և ագրոքիմիա» մասնագիտությամբ գյուղատնտեսական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Թեմայի արդիականությունը:

Նորաստեղծ Արցախի Հանրապետության տնտեսության զարգացման համար չափազանց կարևոր է ընդերքի հարստությունների ճիշտ և ռացիոնալ օգտագործումը, սրբորեն պահպանելով «մարդ-բնություն» հարաբերությունը: Այդ նկատառումից ելնելով հեղինակի ատենախոսության թեման արդիական է և իր մեջ ներառում է բազմաթիվ խնդիրներ ու պահանջում լուծումներ:

Հետազոտության հիմնավորման աստիճանը և գիտական նորույթը:

Արցախի Հանրապետության տարածքում առկա է ոսկու, պղնձի, մոլիբդենի և այլ մետաղների, ինչպես նաև ոչ մետաղական ռեսուրսների բավական հզոր հեռանկարային պոտենցիալ: Սակայն, քանի որ ներկայումս շահագործվում են Դրմբունի և Կաշենի մետաղահանքերը, ապա հետազոտությունների առաջնային նպատակն էր բացահայտել այդ օբյեկտների հարակից տարածքների հողերի (վարելահողեր, արոտավայրեր, անտառփոխություններ, տնամերձ), բնական և մշակովի բույսերի, մակերևութային և ընդերքային ջրերի մեջ ծանր մետաղների պարունակությունը, ինչպես նաև այդ նույն տարրերի

գարունակությունները հարաբերական ֆոնային տարածքներում՝ կապված հանքաքարի արդյունահանման, հանքահարստացման կոմբինատների աշխատանքի, ապարային լցակույտերի պարտական, պոչամբարներում տեխնոլոգիական հոսքաջրերի կուտակման, մթնոլորտային հոսանքներով փոշու և աերոզոլների տարածման հետ, որոնք կարևոր ելակետային տվյալներ են հանդիսանում ցանկացած հանքարդյունաբերության օբյեկտի շառավղում էկոլոգիական իրադրության գնահատման համար:

Արցախի Հանրապետությունում հանքարդյունաբերության զարգացման մեկնարկային փուլում առաջին անգամ ուսումնասիրվել է Դրմբոնի և Կաշենի տարածքներում շահագործվող մետաղահանքերից շրջակա միջավայր սփռվող ծանր մետաղների որակական ու քանակական բնույթը հող-ջուր-բույս բաղադրիչների համակարգում՝ ըստ աղտոտման աղբյուրից եղած տարբեր հեռավորությունների, որտեղ մեծ նշանակություն ունեն ռելիեֆը, անտառատնկարկները, քամիների ուժգնությունն ու ուղղությունը և այլն:

Ատենախոսությունում ձևակերպված գիտական դրույթների, եզրակացությունների պարզաբանման աստիճանը, դրանց արժանահավատությունը:

Ատենախոսության մեջ իր առջև հեղինակը դրել է խնդիր և տվել է ճիշտ հիմնավորում, առաջադրված է ատենախոսության արդիականությունը, ներկայացված է վիճակը, ողջունելի է աշխատանքի գիտական նորույթը և գործնական նշանակությունը: Ներկայացված է փորձագնահատումը և հրապարակումները: Աշխատանքի ծավալը և կառուցվածքը համապատասխանում են գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջներին:

Հեղինակը, ոլորտում առկա գրականության հիման վրա, կատարում է վերլուծություններ: Թեման անկասկած, ունի գիտագործնական նշանակություն: Շատ ողջունելի է հատկապես նմուշների լաբորատոր ուսումնասիրությունների ժամանակ նորագույն տեխնոլոգիաների կիրառումը այս տիպի բնապահպանական հետազոտություններում, տեսական նյութը համեմված է հարուստ գրաֆիկներով, աղյուսակներով և լուսանկարներով:

Ատենախոսությունում գիտական դրույթները հիմնավորված են, եզրակացությունները պարզաբանված են բավարար չափով:

Սարսանգի ջրամբարի և Կաշենի արտեզյան ջրի օրգանոլեպտիկ (հոտահամային) և հիդրոքիմիական ցուցանիշներն որակապես համապատասխանում են մաքուր ջրերի

ափանիշներին, իսկ ծանր մետաղների պարունակությունը զգալիորեն ցածր է ՍԹԿ-ից, սնդիկ ընդհանրապես չի հայտնաբերվել, այսինքն ջրային բիոտի համար միջավայրն անվտանգ է:

Բուսական նմուշներում մոխրային տարրերի պարունակությունը նույն բնակլիմայական պայմաններում և նույն հողատարածքներում բավականին տարբեր է, որն ըստ երևույթին կապված է բուսատեսակների ընտրողական հատկությունների, ինչպես նաև էվոլյուցիայի ընթացքում քիմիական տարրերի նկատմամբ առաջացած պահանջների հետ:

Որոշ բույսերի (անասնակեր, ավելուկ, տաքդեղ) օդաչոր վիճակի զանգվածում արձանագրվել է Cu, Pb, Zn տարրերի արժեքների որոշակի գերազանցում ՍԹԿ-ի արժեքի նկատմամբ, սակայն դրանց հետագա վերամշակման ընթացքում այդ տարրերի քանակները նվազում են և վտանգ չեն կարող ներկայացնել մարդու ու կենդանիների համար:

Տաթևիկ Զհանգիրյանի կողմից կատարված հետազոտությունները առանձնահատուկ հրատապ են այն իմաստով, որ Դրմբոնի և Կաշենի մետաղահանքերի շահագործումը ուղեկցվում է էկոլոգիական բնույթի մեկնարկային ուսումնասիրություններով, որոնք կարող են հիմք դառնալ հետագայում շարունակվող նմանատիպ աշխատանքների համար՝ կապված շահագործվող հանքերի ավելացման և բնական էկոհամակարգերում ու ագրոէկոհամակարգերում տեղի ունեցող կառուցվածքային և ֆունկցիոնալ փոփոխությունների հետ:

Արցախի Հանրապետությունում շահագործվող հանքավայրերի և մոտ ապագայում շահագործման ենթակա հանքավայրերի գումարային ազդեցությունները կարող են առաջ բերել հանրապետության ամբողջ տարածքի էկոլոգիական իրադրության անբարենպաստ փոփոխություններ, ուստի անհրաժեշտ է այսուհետ ամենամյա մոնիթորինգային հետազոտությունների իրականացում:

Ատենախոսության գիտական, գործնական և կիրառական նշանակությունը:

Կատարված ուսումնասիրությունները հնարավորություն կտան ճիշտ գնահատել ստեղծված ու փոփոխվող էկոլոգիական իրադրությունը Դրմբոնի և Կաշենի, ինչպես նաև շահագործման համար հեռանկարային համարվող մետաղահանքերի տարածքներում ու դրանցից տարբեր հեռավորության շառավիղներում, կանխատեսել ամբողջ տարածաշրջանի էկոլոգիական վիճակը և մշակել բնապահպանական միջոցառումներ՝ ուղղված էկոհամակարգերի ծանր մետաղներով աղտոտվածության նվազեցմանը:

Հետազոտությունները կարող են հիմք հանդիսանալ նաև հանքարդյունաբերական օբյեկտների շրջակա տարածքները գոտիավորելու համար՝ համաձայն ծանր մետաղների կուտակման աստիճանի:

Աշխատանքում տեղ են գտել նաև բացթողումներ:

- Աշխատանքի առաջին գլուխը նվիրված է Արցախի Հանրապետության բնակլիմայական պայմանների նակարագրությանը: Անհրաժեշտ էր ներկայացնել միայն հետազոտվող տարածքների բնակլիմայական պայմանների վերլուծությունը:
- Աշխատանքում ներկայացված աշխատանքային պրոցեսի լուսանկարների քանակը շատ է, անհրաժեշտ է կրճատել և բարձր որակով ներկայացնել:
- Աշխատանքում կան էջերի համարակալումների և բովանդակության թեմաների անհամապատասխանություն՝ էջ 68:
- Ատենախոսի կողմից հողից, ջրից և բույսերից վերցված նմուշներում որոշվել են բազմաթիվ քիմիական տարրերի պարունակություններ: Պարզվել է, որ հողերում կորալտն ու սնդիկը թույլատրելի կոնցենտրացիաները գերազանցում են համապատասխանաբար 20-40 և 3-10 անգամ, ինչն ըստ ատենախոսի կապված է երկրաբանական և երկրաքիմիական առանձնահատկությունների հետ, սակայն այդ առանձնահատկությունների վերաբերյալ բավարար չի նշվում:
- Բույսերում քիմիական տարրերի պարունակությունների հիման վրա ատենախոսը եզրակացնում է, որ Դրմբոնի տարածքում բույսերի կողմից ավելի շատ կուտակվել է ցինկ, իսկ Կաշենում՝ ցինկ, ստրոնցիում, կապար և պղինձ, որը ատենախոսը ամբողջական չի բացատրում:
- «Մետաղահանքային արդյունաբերություն» արտահայտությունը ատենախոսության վերնագրում ընդունելի չէ:


Եզրակացություն

Ելնելով վերոնշյալից գտնում ենք, որ Տաթևիկ Արթուրի Զհանգիրյանի «Արցախի Հանրապետության Դրմբոնի և Կաշենի մետաղահանքային արդյունաբերության ազդեցության գնահատումը հող-ջուր-բույս համակարգում» թեմայով ատենախոսությունը ինքնուրույն, ավարտուն աշխատանք է, որը մետաղահանքերի

շահագործման հետ մեկտեղ կատարված արժեքավոր էկոլոգիական բնույթի հետազոտություն է: Հայցորդի կատարած աշխատանքը նշված հանքերի շահագործման առաջին ՇՄԱԳ-ն է, այն կատարված է տեսական, գործնական և մեթոդական բարձր մակարդակով, բավարարում է ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին և այն կարող է ներկայացվել հրապարակային պաշտպանության, իսկ նրա հեղինակ Տաթևիկ Արթուրի Զհանգիրյանը արժանի է գյուղատնտեսական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը 2.01.01.«Ընդհանուր երկրագործություն, հողագիտություն, հիդրոմելիորացիա և ագրոքիմիա» մասնագիտությամբ:

Ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների
հանքավայրերի ամբիոնի վարիչ,

երկրաբանա-հանքաբանական գիտ. թեկնածու,
դոցենտ



Շ. Խաչատրյան

Սոցիալ-տնտեսական աշխարհագրության

ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտ. թեկնածու,
դոցենտ



Վ. Գրիգորյան

Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության
ամբիոնի դոցենտ, աշխարհագրական գիտ. թեկնածու




Վ. Մուրադյան

Շ. Խաչատրյանի, Վ. Գրիգորյանի, Վ. Մուրադյանի

ստորագրությունները հաստատում եմ

ԵՊՀ գիտ. քարտուղար, պատմական գիտ. թեկնածու



Լ. Հովսեփյան